

федеральный
Директор

9(48.923)
ф-28

1919

ԹԻԻ 25.- Ս.Գ. 262. ԿՈՒՍ. ԱՐԵՐ. ՇՐՋ. ԿՆԴՐ. 1.- ՄԱՐՄՈՆ

ՓԱՐԱՄԱԶԻ ՃԱՌԸ

ԻՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՍ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

1898 ԹՈՒԻՆ



11

Տ Պ Ա Ր Ա Ն

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

1919

Շ Ի Ք Ա Կ Օ

Թիի 25,- Ս.Գ.ՀնԶ. Կոնս. ԱՄԵՐ. ՇՐՋ. ԿԵԴՐ. Վ.- ՍՍՀՄ 15 OCT 2011

419

9(47.925)

Կ-28

ՓԱՐԱՄԱԶԻ ՆՍՌԸ

ԻՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆՍ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

1898 ԹՈՒԻՆ



Տ Պ Ա Ր Ա Ն

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԱՅԱՍՏԱՆ»-Ի

1 9 1 9

Շ Ի Ք Ա Կ Օ

28.08.2013

16697



3249-69

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ՓԱՐԱՄԱԶԸ ՎԱՆՈՒՄ, 1897-98

1896-ի կոտորածների, աւարառութիւնների եւ հրկիզումների հետեւանալով՝ Վասպուրականի Հայ Ժողովրդի մեջ վհատութեան, լիւրժի նշաններ էին սկսել երեւիլ:

Վասպուրականում մղուած ահեղ կոխների մեջ՝ թանկագին շատ յեղափոխականներ էին ընկել:

Թորք կառավարութիւնը Հայ մտաւորականութիւնը եւ կենսունակութիւնը արմատապէս խորտակելու ձգտումները հրապարակ էր դրել:

Յեղափոխական ոգին տկարանալու, թուլանալու վրայ էր:

Յեղափոխական Վազմակերպութիւնները անդամաւորւծուելու վտանգի մեջ էին:

Հարկաւոր էր Յեղափոխական Կրակը անդէջ, վառ պահել. Ժողովրդին ոգի, կորով

ներշնչել, երա տրամադրութիւնները բարձրացնել եւ Մարտական Վազմակերպութիւնը իր բարձրութեան վրայ դնել եւ ծառայ տալ:

1897-98-ին Կոռակարութեան պաշտօնի եւ կանչում Շեմսի փաշան, որ 1896-ին զինուորական հրամանատար էր եղել եւ Վանայ Վիրայեթը փակող Բարձր Կօմիսիտը Սաատետիս փաշայի կամակատար գործիքը:

1897-ի Աշնանից մինչեւ 1898-ի Գարունը թրքական «Վարգ ու խաղաղութիւնը» վերահաստատուել էր:

Յեղափոխականի շունչը նորից պետք է փչեր. պահանջը մեծ էր, կարիքը՝ հրամայական:

Այդ օրերի մեջն է, որ Փարամազը՝ 40 հոգիկոց իր խմբով՝ անցնում է Պարսկական սահմանը եւ մտնում Վասպուրական:

Յաղթական մի ֆանի ընդհարումներից յետոյ՝ Խումրը մօտենում է ֆաղափին:

Փարամազը յարաբերութեան մեջ է մտնում Սօցիալ Դեմօկրատ Հեցակեան Ընկերների հետ:

Այդ ժամանակուայ մեր գլխաւոր ընկերներն էին՝ Փանոս Մարութեան, Արմենակ Միրզախանեան, Մկրտիչ Տ. Բարսեղեան,

Վարսպետ Տպաղեան, Մելիֆն (Ազատ Ռուսանիկ) եւ ուրիշ շատեր:

Խումրին պետք էր ծածկ հրահանգները տալով, զանազան կողմեր ցրուել, պահելուց չետոյ՝ Փարամազը ֆաղափ է մտնում, իր հետ ունենալով Վարդանին եւ Արշակին (Կովկաս—Հայեր):

Որքան որ ամեն զգուշութիւն ձեռք է առնում, այնուամենայնիւ սեւ մամուռ թիւնը գալիս է:

Փարամազը, Վարդանը, Արշակը եւ Վանեցի վերոյիշեալ հինգ ընկերները ձերբակալուում, բանտարկուում են:

Առաջնորդ Արսէն Ծ. Վ. Մարգարեանը, որ միաժամանակ Աղթամարի Կաթողիկոսն էլ էր, եւ Քաղափական Ժողովի ատենապետ՝ Աւետիս Միրզախանեանը (Արմենակի հայրը) ամեն միջոց գործ են դնում, Կառավարական շրջաններում, բանտարկեալների վիճակը թեթեւացնելու եւ նրանց «ՅԱՆՅԱՆՔԸ» մեղմելու:

Փարամազ եւ իր երկու Կովկաս—Հայ ընկերները սկզբում դժկամակում են Ռուս Հիւպատոսին դիմելու եւ նրա պաշտպանութիւնը խնդրելու. բայց բանտարկուած Վանեցի ընկերների ծնողաց եւ պարագաների

ստիպման ներքոյ, հարկադրում են այդ դիմումը կատարել:

Ռուսաց Հիւպատոս՝ Վլադիմիր Մաշեւ-
կին չի ուզում որ եւ է պաշտպանութիւն ըս-
տանձնել: «ՔԱՆԻ ՈՐ ԴԻՄՈՒՄ ԿԱՏԱՐՈՂ-
ՆԵՐԸ ԻԱՐԵԿԱՄ ՄԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ
ԽՈՌՎՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒՅԱՆՈՂՆԵՐ, ԹԸՇ-
ՆԱՄԱԿԱՆ ՅՈՅՅԵՐ ԵՒ ԿՈՒԻՆԵՐ ՊԱՏ-
ՐԱՍՏՈՂՆԵՐ ԷՒՆ»:

Բանտարկուած Վանեցի ընկերները
Երամեան դպրոցի նախկին սաներն էին. իսկ
ընկեր Մկրտիչ Տ. Բարսեղեանը՝ դպրոցի
ուսուցիչներից մէկը: Դպրոցի տնօրէն պր.
Համբարձում Երամեանը շաւ յարաբերու-
թեան մէջ է լինում Մաշեւսկու եւ իր օգնա-
կան Իրքեւսի հետ: Օգտուելով իր բարեկա-
մական կապերից, պր. Երամեան համոզում
է Մաշեւսկուն հաւատարմութիւն որ. «Իր աշա-
կերտները պատահական յարաբերութիւն են
միայն ունեցել Փարամազի հետ.....»:
Իր ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ յառաջ տանե-
ցով՝ պր. Երամեանը հասկացնում է Հիւպա-
տոսին թէ՝ «Ռուսահպատակների շփումը
Հիւպատոսարանի կողմից՝ Թուրքերին շփա-
ցում եւ Հաշերին վհատութիւն պիտի պատ-
ճատէ»:

Մաշեւսկին սկզբում վարանման մէջ է
ընկնում եւ յետոյ իր պաշտպանութիւնը խոս-
տանում:

Մինչ այս մինչ այն՝ պր. Երամեանը դի-
մում է Ֆրանսիական Հիւպատոսարանի Գոր-
ծակատար՝ Père de France-ին, — Դօմինիկեան
մի կրօնաւոր — որ Վասպուրականի կոտորա-
ծից յետոյ շատ օգտակար էր եղել Հաշերին,
առեւանգուած կիները ազատելով, նպաստ-
ներ բաշխելով եւ Հայոց իրաւունքները
պաշտպանելով: Այդ ԱԶՆԻԻ Ֆրանսիացին
խոստանում է ամեն աջակցութիւն տալ:

Պր. Երամեանը դիմում է նաեւ Անգղիա-
կան Հիւպատոսին եւ պիտի եղած բացա-
ւորութիւններով՝ նրանից էլ խոստում է առ-
նում Բանտարկեալներին պաշտպանութեան
գալու:

Երբ դատաւարութիւնը սկսում է՝ երեք
Հիւպատոսները միասին դատարան են մըտ-
նում: Ունկնդիրների բազմութիւնը ահագին
է լինում: Եւ Փարամազը արտասանում է իր
հռչակաւոր պաշտպանողական՝ «ՃԱՌԸ»:

Փարամազը դատաւարտւում է կախա-
ղանի:

Մաշեւսկին Փարամազին, Արշակին եւ
Վարդանին՝ կապիտիւլաիտների հիմուն-

քով՝ պահանջում է որպէս ռուսահայատակներ, եւ մի քանի ամիս հիւպատոսական բանտը պահելուց յետոյ՝ հսկողութեան տակ Ռուսաստան է ուղարկում:

Պատմական այս շրջանակը աչքի առաջ ունենալով՝ ընթերցողները այժմս է՛լ աւելի շաւ պատրաստուած կը լինեն հասկանալու Փարսմազի այս **ՃԱՌԸ**, որ մեր **Յեղարիոյս** կան **Գրականութեան** մեջ իր որոշ տեղը պիտի գրաւի:

Ս. ՍԱՊՍԷ-ԳԻՒԼԵԱՆ

ԻՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՃՎԱՍՏԱՆՈՒՄ 1898 ԹՈՒԻՆԸ

— օ«†» —

(Պաշտպանողական ճառ՝ ատուած 1 Օգոստոս. «Վան քաղաքի Քրեական դատարանում»):

Պարոն Նախագահ. Մեր դատավարութեան ամբողջ ընթացքում դուք՝ կանխակալ կարծիքների վրայ հիմնուած, անուանեցիք ինձ եւ իմ ընկերներին «խռովարարներ», «սքիւկաներ», «աւազակ - կողոպտիչներ», եւն, եւն: Սրանով գալիս եմ ապացուցանեմ «Ժողովրդի անդորրութիւնը վրդովողներ» յու ձեր կարծիքների անհիմն լինելը, որով եւ արձակուելիք վճիռների՝ թէ իրաւաբանականի եւ թէ խղճի կողմից զուրկ լինելը: Միակողմանի չլինելու համար դուք, պրն. Նախագահ, որպէս արդարութեան պաշտպան պիտի լսէք ամենայն անդորրութեամբ եւ մեր պաշտպանողականը, որը մեր իրաւունքն է արտայայտել, իսկ ձերը՝ լսել: —

Մենք խռովարարներ, սրիկաներ չենք: Սը-
րիկայ լինել, խռովարար լինել եւն, եւն,
նշանակում է շահագործել ժողովուրդը,
խախտել այդ ժողովրդի մէջ գոյութիւն ու-
նեցող Սահմանադրութեան էութիւնը, որ
բոլոր օրէնքների մայրն է, ազգաբնակու-
թեան առաջադիմութեան շարժառիթը:

Լինել այդպէս ու այդ տեսակ վարուել՝
բոլորովին հեռու է մեր խղճից, զգացմուն-
քից ու պաշտօնից. այլ վարուեցողութեան
այդ եղանակը սեփական է մի դասակարգի,
որը իր գոյութիւնը պահպանելու համար ա-
մեն տեսակ արգելքներ է դնում առաջադի-
մող ազգաբնակութեան ոտքերի առջեւ, ո-
րով եւ ծնեցնում այդ ազգաբնակութեան
մէջ մեզ նման ժամանակի ու պահանջների
հարադատ գաւակներ, նրա բողոքների ան-
վեհեր արտայայտիչ-պաշտպաններ՝ Յեղա-
փոխականներ: Այո մենք Յեղափոխականներ
ենք, Յեղափոխականներ ճանչցուած քաղա-
քական աշխարհից, օրինական Յեղափոխա-
կաններ, որ եւ ունինք մեր ծագման մանրա-
մասն պատմութիւնը՝ հաստատուած նոյն
իսկ Օսմանեան կառավարութիւնից: Ահա-
ւասիկ եւ փաստը. — մինչեւ սրանից 20 տա-
րի առաջ Օսմ. կառավարութիւնը՝ լինելով
կատարեալ տէր իր հպատակ ազգաբնակու-
թեան, կատարում էր, հէնց կատարում էլ է,

ՎՐԻՊԱԿ. — էջ 9, 5-րդ տողը Թ-ըղիմ տեղը կարգալու է:

այդ ազգաբնակութեան մէջ Սիւա Աստծու
դերը: Բալքանեան ազգերի պատմութիւնը
մեր աչքի առջեւն է: Այնտեղ գուցէ, դուք
եւ գիտէք, պ. նախ., թէ Օսմ. կառ. պաշ-
տօնեաների խժոժութիւնները, վայրենի
գործողութիւնները ի՞նչ քստմնելի տպա-
ւորութիւն էին գործում քիչ ու շատ զգա-
յուն սրտի վրայ:

Այնտեղ՝ այդ խաղաղ ազգաբնակու-
թեան մէջ, Օսմ. կառավարութիւնը միայն
մի սկզբունք ունէր — որքան կարելի է ոչըն-
չացնել մի ժողովուրդը, որ զգում է, ապրում
է առաջադիմող սկզբունքներով, որ ունի
յուսալից ապագայ, որ շատ՝ ուշ իր բախտը
բաժանելու է Օսմանեան յետադիմող, քա-
ղաքակրթութեան անընդունակ բախտից:
Եւ սուրն ու հրացանը՝ կոպիտ ոյժը, իր բա-
ցարձակ ասպարիզում նախճիրներ էր գոր-
ծում. կոտորում էր մարդ արարածը, իսկ
Օսմանեան կառավարութիւնը, սարսափը
տիրապետելու միջոց համարելով, այդ կո-
տորուած մարդ-արարածների գլուխներէից
բուրգեր, մինարէներ էր կառուցանում, իր
քաջագործութիւններին արքան էր կերտում:
(բողոք դատախազի կողմից): Հոսում էր
արիւնը ջրի փոխարէն եւ օրը կէսօրին վայ-
րագ զինուորները կնոջ արգանդը պատռե-
լով՝ հանում էին չկազմակերպուած երեխան

ու սունինները վրայ խաղացնում, հրճում:
(քողոք դատախազից. դադրեցում: Կօն-
սուլների ստիպմամբ շարունակում):

Վերջապէս Բալկանեանների լացն ու կոծի
հառաչանքը արեան գոլորշիներէց կազմը-
ուած ամպերի միջից անցնելով ընդհարուեց
Նախախնամութեան գահին, որտեղից ան-
գլորդառնալով թափանցեց Ռուսաց Ազա-
տարար Կայսրի՝ Ալէքսանդր Բ-ի սրտի մէջ:
Բալկանեան ազգերի ազատութեան գործը
իր վրայ առնելով՝ Ալէքսանդրը պատերազմ
հրատարակեց Սուլթանական կառավարու-
թեան դէմ: Խրոխտաց ինքնակալը եւ Օսման
ու Մուխթար փաշաներին զօրքի գլուխ հրա-
ւիրելով՝ հրամայեց ինքնակալութեան դրօ-
շը՝ սրբազան Թուղրան, հիւսիսային բեկով
վրայ տնկեն:

Սկսուեց ահեղ պատերազմը. արիւն ար-
եան փոխարէն: Եւ 19-րդ դարը Արդարու-
թեան նժարը ձեռին, Իրաւունքի պսակը դըլ
խին հասաւ օգնութեան Ազատարարին կըն-
քելով իր վերջնական որոշումը՝ Մանէ, Թէ-
կեղ, Փարէս—Չափեցի, Կշոեցի, Բաթանե-
ցի: Ռուսաց յաղթական զօրքը իր ետեւում
թողնելով Բաթում, Արտահան, Ղարս, մեծ
փորը եւ Պօլսի խարխուլ պատերի տակ իր
նախաձառիկը վայելեց:

Բայց Եւրոպական պետութիւնների վա-
ճառականական շահերը յետ կասեցրին Ազա-

տարարի յաղթական բանակը մինչեւ Սան—
Ստեֆանօ, ուր եւ կայացաւ Օսմանեան հը-
պատակ ազգերի Ազատութեան գործը: Այդ
Դաշնադրութեան 16-րդ յօդուածը վերաբե-
րում է Հայերիս, որ եւ հաստատել է ներկայ
Սուլթանը՝ կամայ թէ ակամայ:

Տեսնում է՝ ք, պ. Նախ., ինչպէս Հայ-
կական Հարցը քաղաքական աշխարհի մէջ
մտաւ ունենալով իր իրաւաբանական հիմքը,
որ է Տաճիկ կառավարութեան ինքնավայել
բռնութիւնը: Շարունակենք. նոն Եւրոպա-
կան պետութիւնների ամբիցիան ու ներքին
շահերը այդ Դաշնադրութիւնը փոխեցին
Բերլին, ուր Հայկական Հարցը անցաւ 61-րդ
յօդուածի մէջ: Այդ յօդուածի տրամադրու-
թիւնն է — Սուլթանը երաշխաւորում է Հայ
կական բռնութիւնների համար Եւրոպական
Աւագ պետութիւնների առջև և պարտաւոր-
ւում է այդ բռնութիւնների համար հաշիւ
տալ նոյն պետութիւններին են. են: Բայց,
պ. Նախ., Տաճիկ կառավարութիւնը կատա-
րե՞ց ազնիւ երաշխաւորողի դերը: Պատմու-
թիւնը մեր ամենաարդար փաստն է: Երաշ-
խաւորելուց յետոյ՝ փոխանակ ժողովրդի
շահերը պաշտպանելու, ազգաբնակչութեան
մէջ թշնամութիւն սերմանեց Տաճիկ կառա-
վարութիւնը, սուտ լուրեր տարածելով՝ իբր
թէ Հայերը Բէկութիւն, Թագաւորութիւն
են ցանկանում, այն ինչ նոյն այդ ձեր կառա-

վարութեան, պ. Նախ., յայտնի է Հայերի պահանջը Բար—Ալիի Յոյցով, 1895 թ. Դէպքով, Դադատիայի փառաւոր Դատավարութեամբ եւն, եւն, որոնցով ցոյց տուեց Հայաստանի ազգաբնակչութեան պահանջը թէ Օսմ. կառավարութեան եւ թէ Եւրոպական Պետութիւններին «Հնչակեան» Կուսակցութիւնը, որի Դրօշակի եւ Սուրբ Սկզբունքների ջերմ երկրպագուներից մէկն էլ պատիւ ունիմ ես լինելու: Տէրութեան սերմանած թշնամութիւնները ազգաբնակչութեան մեծ աղէտների ենթարկեց: Յիշենք այստեղ Տաճիկ կառավարութեան միմիայն 4-րդ զօրաբանակի հրամանատար Մամէտ-Չաքի փաշայի սխրագործութիւնները, որ գլխին հաւաքելով կոպիտ զօրքն ու վայրենի խուժանը բնաջինջ արեց Սասունի մի ափ խաղաղ Հայ ժողովուրդը ու արժանացաւ... բարձրադոյն շնորհի:

Գրգուռեց եւրոպական ժողովուրդը. եւ Չաքիի կուրծքն ու ճակատը, որ արժանացել էին պետութեան ամենաբարձր շքանշանների, արժանացաւ եւրոպական ժողովրդի կողմից թուք ու մուրի, իսկ այդ զգուշի գործի հեղինակը պ. Նախ., Անգլիայի մեծ Մերունույ-Գլատադոնից կնքեց Մեծ-Մարգատսպան, Մեծ-Ոճրագործ անունով:

Վայել անուն. (բողոք, իրարանցում: «Զի կարեղի, եֆեկտիմ», ասում է դատա-

խաղը:— «Կարեղի ե, աղա Մուդդայի Ումումի (դատախազ) պատասխանում է Ռուսաց Կոնսուլ պ. Հիպպիուս: Պաշտօնական ճարմիրը վեր է կենում ցրուելու, իսկ Կոնսուլները ստիպում են յանուն միջազգային օրէնքի: Վերջապէս կարգը պահպանում է):

Եւրոպայի զրգուման ներքեւ Տաճիկ կառավարութիւնը այլեւս չկարողանալով ծածկել իր ոճիրները ստիպւեց ստորագրել Հայաստանի 6 Նահանգների բարենորոգութեան ծրագիրը: Այսպիսի մի ծրագիր եւս ստորագրեց Զէյթունի փառաւոր պատերազմից յետոյ: Իսկ թէ կատարե՞ց Սուլթան Աբդուլ-Համիտ էֆէնդին իր խոստումը՝ այդ նոյն իսկ դուք եւս կարողէք ձեր աչքով տեսնել, պ. Նախ., եթէ նեղութիւն քաջէք Վանի փողոցները պատիւ, ուր այրուած տների սե սե պատերն ու փլատակները խոստացած ու Սուլթանական ձեռքով ստորագրուած բարենորոգութեան ամենափառաւոր իրադրո՞ծումն է... Համառօտենք պ. Նախ., — Սան Ստեֆանույի եւ Բերլինի Դաշնագրութիւններով Հայկական Հարցը քաղաքականութեան իրաւունքի տակ մտաւ: Սասունի եւ Զէյթունի Ծրագրների ստորագրումով՝ Վանի, Տիգրանակերտի, Էրզրումի, Երզնկայի, Բաղէշի եւ Զէյթունի ազգաբնակչութիւնը եղաւ լիակատար տէր իր երկրի: Եւ

որովհետեւ Սուլթանական այդ խոստումը փոխանակ իրազործուելու, աւելի ու աւելի կոտորածներ, աւերումներ առաջ բերեց, բնականաբար, մենք, ձեր առաջ ամբաստանուած «Հնչակեաններ» մեր իրաւունքի օրինական պահանջողներն ենք, ուրիշ խօսքով՝ պատուաւոր Յեղափոխականներ ենք եւ ո՛չ թէ «սրիկաներ», «խռովարարներ», «ժողովրդի հանգստութիւնը խանգարողներ» եւն. եւն., ինչպէս մի ուժեղ ձեռքից ճնշուած, դուք եւս այդպէս էք անուանում մեզ, պ. Նախագահ: Այո՛, մենք Յեղափոխականներ ենք, «Հնչակեան» անվահեր Յեղափոխականներ:

— Ի՞նչը ստիպեց մեզ Յեղափոխական լինելու, կուգէք իմանալ, պ. Նախ. չէ՞: Այո՛ ձեր պաշտօնը ստիպում է ձեզ այդ եւս լսել, միայն եթէ այդ պաշտօնին աննենգ ասպետն էք: Տաճիկ կառավարութեան անպատմելի բռնութիւնը ստիպեց մեզ Յեղափոխական լինելու: Աւանդութիւնը, դարերով կաշմուած աւանդութիւնը ժողովրդի սրբագործած ճշմարտութիւնն է, նրա կեանքի, կառութեան ճշգրիտ պատկերը՝ հայելին է:

Այսպիսի մի աւանդութիւն պատուում է Տաճիկ կառավարութեան հպատակների մէջ, իբր թէ Սուլթաններից մէկը, կարծեմ Օր-

խան՝ մի թուղթ կնքելու համար, կօշիկ պալատը թանաքոտում է ու սեղմում թղթին. ձեւակերպուած նախը դուրն է դալիս եւ ի՛նչ... Նրանից առնում է արդարութեան նշանի տիպը՝ Սրբազան Թուղրան: Այս աւանդութիւնը ցոյց է տալիս, որ Օսմ. կառավարութեան արդարութիւնը աքացին է: Իրական կեանքը արտայայտում է այս աւանդութիւնը:

Համառօտակի թուենք մի քանի այնպիսի աքացիներ, որ հասարակութեան մէջքին ու ձախտին են կաշում:

1.— Տերութեան հրամանով կոտորած ու կողոպուտ.— Չորս տարուայ ընթացքում կոտորել են 175000-ից աւելի հայեր, 80 հազարից աւելի ընտանիք կողոպտուել են, 2500 գիւղ կրակի է տրուել: Սրանք կատարուել են Տէրութեան հրամանով. Սաադ-էդդին, Չէքի, Բահրի եւ ուրիշ փաշաներ դրա հերոսներն են: Վանի մէջ մէկ Բարձրաստիճան պաշտօնեայ՝ Ղալբ փաշա, հարուստ հայերին իր տունը հրաւիրեց պաշտպանելու նպատակով, բայց կողոպտելուց յետոյ իր ձեռքով ամենքին էլ՝ մօտ 200 հոգի, անասելի չարչարանքով սպանեց: Արձակում 450 հոգու եկեղեցու մէջ գինորները ոչխարի պէս

3249-69



մորթեցին: Ալջաւազում տեղական Մուղլի-
րը 40 հոգու ցորնահորի մէջ կենդանի թա-
ղեց՝ օրինակ վերցնելով Ձէքի փաշայից, որ
600 հոգի կենդանի թաղել էր հորի մէջ: Մոք-
սի կառավարիչը տեղական Հայերին խոստո-
ւանեց՝ «Ձեմ կարող, ասում է, ձեզ պաշա-
պանել քանի որ Տէրութեան հրամանն է»: Շարաֆ բէյ, աւագակ Շաքիր, Ջաֆար բէյ,
Էսայլն, Տէրութեան շնորհիւ շքանշաններ
արժանացան, որովհետեւ չատ կոտորեցին
ու կոզոպտեցին:

Մենք կոտորածների ու կոդոպուտ-
ների մանրամասնութեան մէջ չենք մտնում,
այդ ամենքին յայտնի է. նոյնպէս մանրա-
մասն օրինակներ չենք ներկայացնում ապա-
ցուցանելու կառավարութեան ձեռքով լինե-
լը, միայն այսքանս ասենք, այ. Նախա-
գահ, «Հնչակեան» Կուսակցութիւնը Բար-
Ալիից ուղարկուած՝ Հայերին կոտորելու մի
հրաման է ձերբակալել ու ներկայացրել,
ուր հարկն է:

2.— Սրբապօղոթիւն: Խիղճը՝ ուրեմն
եւ մարդուս հոգեկանը անձեռնմխելի է նոյն-
իսկ վայրենիների մէջ. իսկ Տաճիկ կառա-
վարութիւնը դրա հետ խաղում է այնպէս,
ինչպէս կատուն մկան հետ: Հայոց եկեղե-

ցիները (570), վանքերը (80) այրւել, ու ա-
պականուել են: Մի մեծ գիւղում, որտեղից
բռնի կրօնաւիժի եղած քահանան ինձնից
օգնութիւն էր պահանջում՝ տեղական Գայ-
մագամը ստիպում է քահանային շան լակո-
տը Գրիստոնէական ծէսով մկրտի ու հաղոր-
դի, որ և կատարւում է, որից յետոյ մեռունը
հացի վրայ լեցնելով շներին է քցում:

Մի ուրիշ պաշտօնեայ շունը, կատուն, էլը
տեղան հանելով՝ հաղորդել է տալիս, ու Քը-
րիստոնէական ոչնչութիւնը բարբառնում:
Դեռ չենք ասում դրանց միջոցաւ խուժանի
դործած սրբապօղոթիւնը: Մօտ 300 ե-
կեղեցի փոխել են Մէջիդի. 100 գիւղ բռնի
կրօնաւիժի են արել: Մեծ թուով հայ կա-
նայք ու աղջիկներ հարէմ տարուել. անթիւ
պատանիներ ու կիներ, աղջիկներ բռնաբար-
ուել, Էսայլն, Էսայլն:

3.— Հարկը եւ հաւաքելու եղանակը.
Գիւղերի երեսը վաճառւում է հարուստ կա-
պալառուներին, որով եթէ գիւղը պիտի տայ
100 ոսկի, կապալառուն ստանում է 200 եւ
աւելի: Ձինւորական տուրքը՝ փոխանակ
ստանալու 21 տարեկանից, ստացւում է ծրծ-
կերից, դեռ չծնուածից, նոյնպէս և մեռած-
ներից: Չորքոտանիների տուրքը ստացւում

է այն չքաւորներէից, որոնք կենդանի անգամ չունին, կամ ունէին՝ կողոպտուել, թալանուելէ: Նոյն իսկ տուրքի ժամանակ շատ ւաղաներ իրենց կենդանիները վերագրել են տալիս թոյլերին, որով եւ նրանց հարկ վճարել տալիս: Գլխահարկը ստացուած է արգանդի երեխայից անգամ, նոյնիսկ վաղուց մեռածներէից: Մէկ Արտամեացի Տաճիկ ինձ պատմել է. «Մեր ծառի տանձը գնահատեցին 20 դրշ. իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց գնել 10-ը դուրուշով, որի փոխարէն լաւ ծեծուելուց յետոյ՝ վճարեցի տուրքը»: Բայց գիտէ՞ք, Պր. Նախ., որքա՞ն այսպիսի տանձի եւ ուրիշ ծառեր կան: Հետաքրքիր է խաղողի տուրքը, մի պտղից վե՛ց տուրք: Նախ հողի տուրք (ջրինն էլ աւելի), յետոյ խաղող պտղի տուրք, մի տուրք եւս խաղողը չիրա շինելու համար, մի տուրք խաղողի չանչի համար, դարձեալ մի տուրք օղի քաշելու համար. մի տուրք եւս օղին ու գինին վաճառելու համար. դեռ չենք տեսած մի տուրք եւս դրանով պարապողի աշխատանքի համար: Տեսնո՞ւմ էք, Պր., Նախագահ, մի պտղի համար անվերջ տուրք: Մանրամասնութեան մէջ չենք մտնում: Իսկ ո՞վ է հաւաքում տուրքը: Ի հարկէ

ոստիկանը: Պաշտօնական որոշմամբ հետեւակ ոստիկանը պիտի ստանայ մէկ ու կէս ոսկի ամսական. իսկ ճիւղորը $3\frac{1}{4}$ ոսկի: Իսկ հինգ տարուց ի վեր նա այդ ուճիկը չի ստանում, չը նայելով իր մեծը՝ Ալայի բէյը այդ ուճիկը իր գրպանն է դնում հետեւեալ կերպով: Ոստիկանին պէտք է գալիս՝ դնելու մէկ լիտր իւղ, կամ մէկ երկնջ դավուրմայի համար. նա ստիպուած՝ ամբողջ ստանալիք իր ուճիկի ստացականը տալիս է ու ստանում մէկ լիտր իւղ, կամ մի երկնջ եւ կամ մի քանի չափ ցորեն: Նշանակում է՝ ոստիկանը մէկ լիտր իւղ, կամ մէկ երկնջ առնում է 10, 20, 30, 40, 50 եւ աւելի ոսկիով: Ձիաւոր ոստիկանը պիտի գայ պաշտօնի, ճի չունի. իսկ Ալային տալիս է նրան 1-2 ոսկիինոց մէկ ձի՝ փոխարէն ստանալով խեղճի Տէրութեան վրայ մնացած հինգ տարուան ուճիկի ստացականը: Նշանակում է խեղճ ճիւղոր ոստիկանը մէկ ձին առնում է իր մեծից 20-60 եւ աւելի ոսկիով: Սրանք անհերքելի ճշմարտութիւններ են, որ կատարւում են եւ՛ Վանում: Այսուամենայնիւ այս ոստիկանը ապրում է, տուն, ընտանիք է պահում, մինչեւ անգամ հարստութիւն էլ է գիղում: Ո՞րտեղից. — ի հարկէ գիւղա-

ցիններին կողոպտելով, որը սովորել է իր մեծից, ինքը եւս նրանից կողոպտուելով. այո՛, գիւղացուն կողոպտելով, լինի այդ գիւղացին Հայ, Թիւրք, Քիւրտ, Ասորի, Ձէրֆէզ, նոյն իսկ Մթրբ-Գնչու, այդ ոստիկանի համար միեւնոյնն է՝ նրան ապրիլ պէտք է, մանաւանդ գիտէ երկրի կարգ ու կանոնը: Թէ ոստիկանը գիւղում, նոյն իսկ քաղաքներում ինչ պահանջ է անում, այդ մասին լուծւում եմ:

Ստրուկ ժողովուրդ՝ քաղցած ոստիկան, եղբակացութիւնը դուք արէք:

Բանտ եւ Արդարադատութիւն. — Խոնաւ, մութ, բորբոսած սենեակ՝ մարդուս արժանապատուութիւնը շղթայել բռնութիւններով, — ահա Տաճկական բանտը: Համառօտ ասենք. ծեծելով, տանջելով ասել են տալիս չեղած իրողութիւններ: «Հասիր-Հաւասիր» տակ՝ վերագրել տալիս տանջուողին իրեն չը պատկանած գործեր ու անտես անձանաչ մարդիկ: Կոտորում են մարդու ոտները, որ այդ դժոխքից չփախչի: Սոված, ծարաւ, շղթան վզին, մեքենան ոտներին մաշում ու անպատուում են առանձնարանում: Եօզդատում՝ բանտի մէջ եօթ պաշտօնեաներ բռնաբարեցին մէկ յայտնի

Օրիորդի: Անդորիայում, նոյնպէս, չորս երիտասարդներ բռնաբարուեցին պաշտօնեաներից. էրզրումում նոյնպէս: Նոյն իսկ Վանի մէջ ներկայ պաշտօնեաներից մէկը՝ Մուգիր Իսմայիլ էֆէնդին բռնաբարել է Աւետիս անունով մէկ երիտասարդի. իսկ դուք յիշում էք, որ նոյն բռնաբարութեան ենթարկուեց եւ Օր. Զարուհին՝ Շամսի փաշա Վալիի բանտում, նախ քան աքսորուելը: Արուամուլութեան ակտով տոչորուած ձեր փոլիսները, Պր. Նախ., միշտ սիրուն երիտասարդներին զանազան պատրուակներով դէպի Կապալթի են քշում: Վերջապէս Տաճկական բանտ ասուած հիմնարկութեան համար համեստութիւնը ստիպում է մեզ լրբել, միայն այսքան ասենք, որ շատերը բանտ բերուելու փոխարէն, ինչ ինչ գիտումներով սպանում են, օրինակ, Տէրօեան Տիգրան, իմ ընկեր Սաեփան եւլն. եւլն: Արդարադատութիւնը կախում ունի բանտի հետ, իսկ այս երկրի արդարադատութեան փոխարէն՝ բնագզներն են առաջին տեղ բռնում. այստեղ օրէնքը պաշտօնեաների կամայականութիւնն է: Օրինակ ձեզ, Պր. Նախագահ, աստեղ մեղադրուած ու 10 ամիս բանտի մէջ տանջուող Աւետիսի յանցանքը

այն է, որ ունի սիրուն կին, որին Հիւանի եւ ընկերութեան փոլիսներ լիբբ վոհմակը արդարութեան, այն էլ Տաճկական արդարութեան հիման վրայ սեպհականացրել է, մարդուն ձերբակալելով. իսկ դուք այդ լաւ գիտէք, ու ի՞նչ արիք: Նոյնպէս փոլիսներ ինչ ինչ լիբբ բնազդով շատերի ձերբակալութիւնը գիտէք. իսկ այդ լրբերին քչեցի՞ք դուք այդ պատասխանատու պաշտօնից Արդարութիւն ձեր Տաճկական բառարանում նշանակում է կաշառք. օրինակներ չատ ունինք: Եւ բանտից, Պր. Նախագահ, քանի՞ քանի՞ անմեղների հառաչանքներն են բարձրանում դէպի երկինք ձեր վերջաւորութեան համար բողոքելու:

5.— Համիդեա՛:— Ենիչարիների հարազատ շարունակութիւնն է Ժողովրդի համար պատրաստուած այս խարազանը: Ազգաբնակչութեան արիւնը, աշխատանքը ծծողն է այս Համիդեան. նրա պատուի բռնաբարողն է այս Համիդեան. նրա սրբութիւնը պղծողն է այս կազմակերպութիւնը: Եւ այսպիսի մի կազմակերպութիւն կարող է հաստատուիլ միմիայն Տաճկաստանում, այն էլ միմիայն Ամենամեծ—Ոճրագործը կարող է ե—

րեւակայել այսպիսի մի կազմակերպութիւն:

Համիդեան Տաճկական կառավարութեան վերջաւորութեան սկիզբ դնողն է:

6.— Ծիախոտի Րեթի, Արա պաշտօնեաներ.— Սա եւս Համիդեայի նման մի կազմակերպութիւն է, աւագակների մի խումբ է, որ առանց միջոցների խտրութեան ամեն տեսակ գողութիւն, լրբութիւն կատարում է՝ ազգաբնակչութեան վրայ մեծ բեռ տալով: Սրա լրբութիւնից զերծ չի մնում եւ իգական սեռի պատիւը. սա է, որ օրը կէս օրին, հրապարակի վրայ, ամօթխած կնոջ, սիրուն աղջկայ ներքնաշորերն է խուզարկում եւ ծխախոտ գտնելու պատրուակով՝ իր լիբբ, գազանական կրքերին յագուրդ տալիս: Գոլջի եւ Համիդեա՛, — Տաճկական պետութեան 19-րդ դարու ամենափառաւոր գիւտն է:

Բայց սրանով մենք չենք ասում թէ Տաճիկ պետութիւնը իր Ժողովրդին, մասնաւորապէս Հայերին, չի սիրում: Նա կը սիրէր . . . եւ իր հայեացքը արտայայտել է Բահրի փաշայի բերնով: Ամենքին յայտնի է Վանեցի խենթ Կեօրոն (Գէորգ), որին Բահրին միշտ դրամներ էր տալիս, փաղաքում, սիրում՝ ասելով. «Ես Հաւերին կը սիրէի, եթէ ամենքը այսպէս լինէին», այսինքն եթէ

բոլոր Հայերը խենթ լինէին, չէ՞: Սա ցոյց է տալիս, որ Տաճիկ կառավարութիւնը՝ քաղաքակրթութեան, յառաջադիմութեան հակառակ լինելով, սիրում է միմիայն բնութեան վիժածներին, հրէշներին . . . :

Ահաւասիկ, Պր. Նախագահ, այն աքացիները, բռնութիւնները, որ արդարացնելով ժողովրդի մէջ պոտոուող բաղնիքի աւանդութիւնը, (Ահա աւանդութիւնը. ներկայ Սուլթանի հայրը բաղնիքում եղած ժամանակ, Սուլթան Համիտի ծնուելու լուրն են բերում: Տիրում է Սուլթանը ու ասում. «Դա ոչ թէ աչքալուսանք է, այլ բօթ, որովհետեւ ես մերկ, նորածինս մերկ, բնականաբար, երկիրս պիտի լինի մերկ»), ստիպում են յեղափոխականեր ծնելու, որոնք զգալով ներկայ օրէնքի, վարչութեան ժողովրդի կեանքին անհամապատասխան լինելը, բռնի միջոցներով կամենում են այդ կործանող կարգերը քանդել ու նրանց տեղ դնել այնպիսի օրէնքներ ու վարչութիւն, որ ժողովրդին տանի զէպի բարօրութիւն, զէպի երջանկութիւն:

Ազգաբնակչութեան բարօրութիւնը, — ահա Հայ Յեղափոխականների մտածած շնորհ ու ճիգը:

Ժողովրդի կեանքը բարւոքելու համար

Յեղափոխականներս պահանջում ենք.

Ա. — Խղճի Ազատութիւն. — Խիղճը մարդու հոգեկանն է, աստուածայինն է. և որքան լայն ու ընդարձակ է աստուածայինը, որքան անճնչելի է նա, այնքան էլ մարդու խիղճը պիտի լինի լայն, ընդարձակ, ազատ ամեն բռնութիւններից ու ճնշումներից:

Ծնչել խիղճը՝ նոյնն է թէ մեռցնել մարդու մէջ ազնիւը, վեհը, բարին: Մենք պահանջում ենք հոգեկանի կատարեալ ազատութիւն, ուրեմն մենք Յեղափոխական ենք և ոչ «Սրիկայ»:

Բ. Մամուլի Ազատութիւն. — Ազատ մամուլը մարդու մտքի մէջ լոյս թափանցելով՝ ընդարձակում է նրա հասկացողութեան հորիզոնը, սրում է նրա ուղեղը՝ տալով աւելի նոր, աւելի բարձր գաղափարներ, ընդունակութիւններ դիտելու, հասկանալու ու իրեն ծառայեցնելու բնութեան հրաշալիքները, որով եւ իբրեւ մարդ՝ մարդկային արժանաւորութեամբ ապրելու: Մենք պահանջում ենք մարդավայել կեանք, ուրեմն մենք Յեղափոխական ենք եւ ոչ «խռովարար ներ»:

Գ. Գումարման եւ խօսքի Ազատութիւն. — Գաղափարների շփումով նորանոր հասկա-

ցողութիւններ են առաջ գալիս՝ հասարակական կեանքը աւելի թարմ ու ժամանակի յարմար ուղիի վրայ դնելու համար։ Ազատ գումարմամբ ու ազատ խօսքով է, որ մարդըս կրում է իր վրայ «Բնութեան Թագ եւ Պսակ» անունը. եւ որովհետեւ խօսքը ինքը անհատն է, մենք պահանջում ենք անհատի մտքի ու գաղափարի, հետեւաբար եւ իր բացարձակ ազատութիւնը, ուրեմն մենք Յեղափոխական ենք եւ ոչ «Ժողովրդի անդորրութիւնը վրգովողներ»։

Դ. Կեանքի, Ինչի, ու Պատուի Ապահովութիւն. — Կեանքը բնութեան պարզեւն է և նա՛ կարող է միայն այդ պարզեւր զլանալ, խլել։ Ստացուածքը՝ դառն քրտինքով ձեռք բերուած, կեանքի շարունակութեան միջոցն է, ուրեմն եւ անբաժան կեանքից. իսկ պատիւը՝ լինելով հոգւոյ անդորրութեան պատճառ, ուրեմն եւ կեանքի զարգացման ու բարգաւաճման գլխաւոր գործօն, առնչական է կեանքին ու նրա միջոցներին, հետեւաբար պէտք է լինին անձեռնմխելի։ Բայց որովհետեւ, պ. Նախ., այստեղ փոխանակ իրաւունքի ոյժի, տիրում է ոյժի իրաւունքը, ուրեմն պէտք է մարդուն ինքնապաշտպանութեան միջոց տալ պաշտպանե-

լու իր անձը, ստացուածքը ու պատիւը։

Զպիտի ազգաբնակութեան մի մասը զրկել զէնքից, իսկ միւս մասը զինել ու նրա ջանին քցել։ Սրանով մենք պահանջում ենք անհատի, ուրեմն եւ հասարակութեան թէ՛ կենսականութեան եւ թէ՛ արժանապատուութեան ապահովութիւնը, հետեւաբար մենք Յեղափոխական ենք — ազգաբնակութեան սիրելիներն ենք եւ ոչ «Աւագակ—կողոսկտիչներ»։

Ե. Անուղղակի Տուրքերի Ոչնչացում. — Որովհետեւ անուղղակի տուրքերը ժողովրդի բարօրութեան համար չեն գործածւում, այլ գործ են ածւում մի բուռն դատարկապորտների գոյութիւնը պահպանելու համար, ուստի մենք պահանջում ենք, որ Ազգաբնակութիւնը ազատուի այդ տգրուկների գոյութիւնը պահպանելուց, հետեւաբար մենք Յեղափոխական ենք, ազգաբնակութեան շահերի պաշտպաններ ենք եւ ոչ «Ազգաբնակութեան թշնամի»։

Զ. — Մեր պահանջներին վերջ չկայ, քանի որ կեանքի պահանջներին ևս վերջ չկայ. եւ որովհետեւ մեր պահանջները չեն կարող Օսմանեան պետութեան տակ ապահովուիլ, ուստի մենք Յեղափոխականներն մարդկա-

յին ամենայն իրաւունքով պահանջում ենք՝
 Հայաստանի Ազգաբնակչութեան Բաժանու-
 մը Օսմանեան Պետութիւնից: (Դուք շատ
 բան եք պահանջում, ասում է Նախագահը,
 բայց չեն տալ: Ընդհանուր ծիծաղ): Սրա-
 նով մենք չենք ուզում ստանալ Հայկական
 Բէգութիւն, կամ Թագաւորութիւն, ինչպէս
 այդ քարոզում ու տարածում են սապատա-
 ւոր ուղեղները, իրանց գոյութեան ոչնչա-
 նալու վրայ դողացողները: Երբէք մենք չենք
 առաջնորդում ազգայնական դիւրաթով, —
 Մենք թթու ազգայնամոլներ չենք, մենք
 աննենգ ժողովրդասէրներ ենք ու շատ լաւ
 գիտենք, որ ազգայնական Թագաւորը, Բէգը
 ծում է օտարը: Մեր պահանջն է՝ Հայաս-
 նոյն բռնութիւններն են գործելու, ինչ գոր-
 տանի ազգաբնակչութիւնը, այսինքն, Հայ,
 Քիւրտ, Թուրք, Արաբ, Լազ, Չէրքէզ, Ա-
 սորի, Եզիդի, մինչեւ անգամ Մուսթուր-
 ֆնչուն իր քուէով ընտրի իր կառավարիչը
 ու կառավարուի իրենց կարգուած մարդե-
 րով ու օրէնքներով, որը բարօրութեան
 հասնելու կարճ ճանապարհն է: Մենք պա-
 հանջում ենք Հայաստանը իր մէջ ապրող
 ամբողջ ազգաբնակչութեան համար:

Ես վերջացրի պ. Նախ, եւ Յեղափո-

խականի Սուրբ Հաւատով Հաւատում եմ
 որ պիտի հասնիմ նպատակիս: Ես հաւատում
 եմ, որ ազգաբնակչութեան արդար ձայնը
 չպիտի խեղդուի. Ես հաւատում եմ ու առաջ
 եմ բերում այստեղ Պարսից մեծ բանաստեղծ
 Սաադիի երկտողը, որ ասում է.

Վախենում եմ չհասնիս Քերէ, ով Արաբ,
 Այս ճակատարհը, որ գնում ես, դեպի
 Թուրքստան է:

Եւ իրօք, պ. Նախ., Օսմանեան Պետու-
 թեան այս ընթացքը նրան ոչ թէ դէպի Քէրէ
 սրբավայրն է տանում, այլ ուղղակի դէպի
 Թուրքստան, որտեղից 500 տարի սրանից
 առաջ դուրս եկաւ այս երկրի համար Աս-
 տուածային խարազան լինելու:

Ես վերջացրի, պ. Նախ., եւ Յեղափո-
 խականի վսեմ արհամարհանքով լսում եմ
 ընդհանուր Դատախազի անատամ ամբաս-
 տանութիւնները ու ձեր վճիռները: Ես հա-
 տատացած եմ, որ այդ ամբաստանութիւն-
 ներն ու վճիռները անթառամ պսակներն են
 որ անգիտակցաբար դնում էք Յեղափոխա-
 կաններին գլխին, եւ այն՝ որ դուք իբրեւ
 թուք ու մուր էք մեր ճակատին դնում, ա-
 պագայ սերնդի պաշտաման առարկաներն
 են լինելու: Վճռեցէ՛ք, որքան կարողանաք,

— արհամարհում ենք. վճռեցէ՛ց, բայց
վախեցէ՛ք ապագայից, որ սեւ՝ սեւ՝ գոյնե-
րով է մրոտելու ձեզ. ձեզ, ազգաբնակու-
թեան երդուեա՛լ թշնամիներ: Վճռեցէ՛ք:
Կեցցէ՛ Յեղափոխութիւն:

Կեցցէ՛ Հնչակեան Կուսակցութիւն:

(Կարդացած Վանի Վճռատու Ատեանի
ստաշ 1898 թ. Օգոստոս 1-ին. որից յետոյ
ստացայ ԿԱԽԱՂԱՆԻ ՎՃԻՌ):


29 Յուլիսի, 1898 թ. Վան,
(Ռուսաց Կոնսուլի բանտում)



507
421
507
0

ՓԱՐԱՄԱԶԻ ԳՈՐԾԵՐԸ

- 1.— ՃՈՒՂՈՒՊՐԻՍՏՆԵՐ
- 2.— ՊԱՔՕ
- 4.— ՃԱՌԸ
- 3.— ՔԱՄՈՒ ԲԵՐԱԾԸ, ՔԱՄԻՆ ԿԸ ՏԱՆԻ



Հայաստանի Ազգային գրադարան



NL0429040

16697